



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Էմին Բեգլարյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) նոր կառավարման խորհուրդ կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 07.07.2018թ. թիվ 7/11-Լ որոշմամբ կազմավորվել է Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդ՝ մինչև 2021 թվականի ապրիլի 7-ը պաշտոնավարման ժամկետով:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.4 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը կազմավորվում է փաստաբանների պալատի նախագահից և փաստաբանների պալատի խորհրդի կողմից փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված առնվազն չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցից:*

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.3. կետի համաձայն՝ *խորհուրդը բաղկացած է վեց անդամից: Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցից:*

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.5. կետի համաձայն՝

20 ապրիլի 2021թ.
թիվ 6/15-Ա

խորհրդի չորս անդամներին նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:

Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.5 ենթակետի համաձայն՝ Պալատի նախագահի կողմից որպես Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ առաջադրվել է փաստաբաններ Լյուդվիկ Դավթյանի (արտոնագիր № 1416), Նիկոլայ Հակոբյանի (արտոնագիր № 414), Տիգրան Խուրշուդյանի (արտոնագիր № 451) և Լեոնիկ Հովհաննիսյանի (արտոնագիր № 568) թեկնածությունները:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 29.03.2021թ. թիվ 14.1/7579-2021 գրությամբ որպես Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդում ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանի թեկնածությունը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Փաստաբանական դպրոցի՝ 07.07.2018թ. երեք տարի պաշտոնավարման ժամկետով կազմավորված կառավարման խորհրդի լիազորությունների ժամկետն ավարտվել է,

Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4 հոդվածի 2-րդ մասի, Փաստաբանական դպրոցի կանոնադրության 8.3 և 8.5 կետերի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ նշանակել՝

- փաստաբան, ի.գ.թ. Լյուդվիկ Դավթյանին (արտոնագիր № 1416),
- փաստաբան Նիկոլայ Հակոբյանին (արտոնագիր № 414),
- փաստաբան Տիգրան Խուրշուդյանին (արտոնագիր № 451),
- փաստաբան Լեոնիկ Հովհաննիսյանին (արտոնագիր № 568):

2. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմված է հետևյալ անդամներից՝

- 1) Արա Զոհրաբյան՝ կառավարման խորհրդի ի պաշտոնե նախագահ, ի.գ.թ.,
- 2) Լյուդվիկ Դավթյան՝ փաստաբան, ի.գ.թ.,
- 3) Նիկոլայ Հակոբյան՝ փաստաբան,
- 4) Տիգրան Խուրշուդյան՝ փաստաբան,
- 5) Լեոնիկ Հովհաննիսյան՝ փաստաբան,
- 6) Քրիստինե Գրիգորյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

3. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք փարի ժամկետով՝ 2021 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի ապրիլի 20-ը ներառյալ:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Փաստաբանական դպրոցի տնօրենին և կառավարման խորհրդի նորանշանակ անդամներին, ինչպես նաև որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

20 ապրիլի 2021թ.
թիվ 6/15-Ա
ք. Երևան